



**V Միջազգային գիտաժողով
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**V International Scientific Conference
*THE CURRENT ISSUES IN THEORETICAL
AND APPLIED PSYCHOLOGY***

**WPA Co-Sponsored
Biennial Meeting of Armenian Psychiatric Association
*"DIGNITY IN MENTAL HEALTH"***

ՆՅՈՒԹԵՐ * PROCEEDINGS

23-25 . X . 2015



Yerevan Երևան Երևан



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ն Յ ՈՒ Թ Ե Ր

«Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները»
V միջազգային գիտաժողովի

Երևան, Հայաստան
Հոկտեմբեր 23-25, 2015

YEREVAN STATE UNIVERSITY

PROCEEDINGS

Vth International Scientific Conference
“The Current Issues In Theoretical and Applied Psychology”

Yerevan, Armenia
October 23-25, 2015



ԵՐԵՎԱՆ – 2015 – YEREVAN

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ավանեսյան Հ. Մ. - գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, հ. գ. դ., պրոֆեսոր, Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, ԵՊՀ*
- Բաղդասարյան Ա. Ս. - փ. գ. թ., դոցենտ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան, ԵՊՀ*
- Առաքելյան Ս. Ա. - պ. գ. թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան, Իջևանի մասնաճյուղի տնօրեն*
- Բերբերյան Ա.Ս. - հ. գ. դ., պրոֆեսոր, Հոգեբանության ամբիոնի վարիչ, Ռուս-Հայկական (Մլավոնական) Համալսարան*
- Խաչատրյան Ն. Գ. - հ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ*
- Ավագիմյան Ռ. Ա. - հ. գ. թ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան*
- Ամիրջյան Դ. Ս. - հ. գ. թ., դոցենտ, «Բաց հասարակություն» ֆոնդ, Հայաստան*
- Հովհաննիսյան Ս. Վ. - մ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
- Պապոյան Վ. Ռ. - հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
- Ասրիյան Է. Վ. - հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
- Ստեփանյան Լ. Ս. - կ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
- Մուրադյան Ե. Բ. - կ. գ. թ., Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
- Գալստյան Ա. Ս. - Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
- Հայրապետյան Դ. Ռ. - հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
- Հարությունյան Ն. Ա. - հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասիստենտ, ԵՊՀ*
- Հովհաննիսյան Հ. Ռ. - հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ*
- Մարգարյան Դ. Յու. - հ. գ. թ., Անձի և մասնագիտական գործունեության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
- Գալստյան Ա. Ա. - հ. գ. թ., Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիա, ԵՊՀ*
- Կարապետյան Ն. Բ. - Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիայի գիտաշխատող, ԵՊՀ*
- Պապոյան Ս. Ա. - Փորձարարական հոգեբանության գ/հ լաբորատորիայի գիտաշխատող, ԵՊՀ*
- Ստեփանյան Ս. Գ. - հ. գ. թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դասախոս, ԵՊՀ*

Տ 340 «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի նյութեր, Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, 686 էջ:

Սույն ժողովածուն ներառում է 2015 թ. հոկտեմբերի 23-25-ը Երևանի պետական համալսարանում անցկացված «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի զեկույցների նյութերը:

բերություն արական սեռի ներկայացուցիչների՝ նույնականացման օբյեկտ դառնում է հակառակ սեռի ծնողը այլ ճանապարհով: Հակառակ սեռ հանդիսացող ծնողական կերպարը դառնում է նույնականացման օբյեկտ երբ նույնպես առկա է բացասական զգացողություններ հոր կերպարի նկատմամբ կամ էլ դառնում է հեղինակություն և կարևորությունը կորցնում է նույնականացման օբյեկտ հանդիսացող մայրական կերպարը:

Հետազոտության արդյունքներից հանգում ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է իրականացնել խմբային հոգեբանական ինչպես նաև մանկավարժական աշխատանքներ ծնողական խմբերում, որի նպատակը սեռային դերերի ձևավորման կարևորություն է նույնականացման առաջնային աղբյուր հանդիսացող ընտանեկան փոխազդեցությունների միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ.

1. *Հարությունյան Ս. Ֆ.* Մարդու հոգեւեռական զարգացման հիմունքները: Եր.: ԵՊՀ Հրատ. 2004, 228 էջ:
2. Сексопатология: справочник / Под ред. Г. С. Василченко, 1990. М., Медицина 576с.
3. *Чодороу Н.* Воспроизводство материнства: Психоанализ и социология гендера, М. РОССПЭН, 2006, 496 с.
4. *Эйдемилер Э. Г., Добряков И. В., Никольская И. М.* Семейный диагноз и семейная психотерапия. Учебное пособие для врачей и психологов. Изд. 2-е, СПб.: Речь, 2006, 352 с.
5. American psychiatric Assosiation. 2005. Diagnostic and Statistical Manual of mentql Disorders. Washington, DC: Am. Psychiatr. Assoc 4th ed.. text.rev.

THE UNIQUENESS OF PARENT-ADOLESCENT RELATIONS OF TEENAGERS WITH DESTRUCTION OF GENDER IDENTIFICATION

Khachatryan L. H. ("PsyLife" psychological supporting center, Yerevan, Armenia)

Key words: adolescence, gender-role identification, destruction, parental interaction.

In our research the family interactions are important, as they become the source and the environment that provides the process of primary identification.

The results of the research lead to the conclusion that it is necessary to do a group psychotherapy and pedagogical work with parents, aimed the importance of gender roles formation through family interactions which are the source of primary identification.

ՔՈՓԻՆԳ ԵԶՐՈՒՅԹԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կարապետյան Ն. Բ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

Հոդվածում ներկայացված են քոփինգ հասկացության ռուսական և արևմտյան հոգեբանական դպրոցների մեկնաբանությունները: Կատարվել է քոփինգի մեթոդա-

բանական մոտեցումների տեսական վերլուծություն, որի հիման վրա դուրս է բերվել թեմայի ուսումնասիրվածության համապատասխան ոլորտները և մշակվածության աստիճանը:

Հանգուցային բառեր. քոփինգ, աշխատակազմ, հոգեբանական պաշտպանություն, սթրես, վերահսկվող վարք:

Հասարակական, տնտեսական և քաղաքական ոլորտների զարգացման հետ մեկտեղ օրեցօր փոփոխվում են աշխատանքային պահանջները և դրան զուգահեռ ի հայտ են գալիս նոր գործոններին դիմադրելու, առկա իրավիճակները հաղթահարելու խնդիրներ: Մրցակցային դաշտն աշխատանքային բոլոր ոլորտներում ստիպում է մասնագետին լինել ավելի տոկուն, դիմացկուն և ճկուն, քանի որ փոփոխություններն ու նորարարությունները տրամաբանորեն առաջ են բերում հարմարման նոր պահանջներ:

Աշխատակիցների քոփինգ վարքի և այդ վարքին բնորոշ ռազմավարությունների ուսումնասիրմամբ զբաղված են շատ արտասահմանյան հոգեբաններ, սակայն հայրենական հոգեբանության մեջ ուսումնասիրությունները դեռևս սակավաթիվ են: Թեմայի արդիականությունը պայմանավորված է աշխատաշուկայում հոգեբանական ուսումնասիրությունների պահանջով, մասնագետների ընտրության գործում հետազոտության տվյալների ներդրման հրատապությամբ և տվյալ հոգեբանական առանձնահատկության սակավ ուսումնասիրությամբ:

Ինքնակառավարվող վարքի հոգեբանական հիմքերի ուսումնասիրությունն ունի մի շարք տեսական մոտեցումներ, որոնք հիմքում ընկած են տարբեր մեթոդաբանություններ: Գործունեության տարբեր տեսակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գոյությունի ունի մասնագիտությունների շարք, որոնցում մարդը սկսում է ներքին հուզական դատարկության զգացում ունենալ, քանի որ սոցիալական պատասխանատվություն է կրում այլ մարդկանց և որոշումների կայացման հարցում:

Ժամանակակից հոգեբանության մեջ ակտիվ տեղ է հատկացվում քոփինգի ուսումնասիրմանը: Հետաքրքրությունը քոփինգի նկատմամբ աճել է դեռևս 1990 թվականին, երբ հետազոտողներն անկացնում էին իրենց ուսումնասիրությունները հիմնականում հիվանդանոցներում՝ ներոզով, հարբեցողությամբ, թմրամոլությամբ տառապող և սոմատիկ խանգարումներով հիվանդների հետ (B. A. Ташлыков, 1992; P. K. Назыров, 1992; H. A. Сирота, 1994; E. И. Чехлатый, 1994; B. M. Ялтонский, 1995) [3]:

Հոգեբանության մեջ ինքնավերահսկող վարքի համընդհանուր սահմանում գոյություն չունի: Ռուսական հոգեբանության մեջ առավել մեծ նշանակություն է տրվում վերահսկման գիտակցվածության և ակտիվության գործոններին (Т. Л. Крюкова, E. A. Сергиенко, И. М. Никольская): Արևմտյան հետազոտողներն առավել մեծ նշանակություն են տալիս վերահսկման գործընթացային և սոցիալական հայեցակետերին (R. S. Lazarus, S. Folkman, C. M. Aldwin, E. A. Skinner):

Չնայած քոփինգի ուսումնասիրությունների մեծ քանակին, դեռևս չի բացահայտվել նրա օստոգենետիկ ծագման առանձնահատկությունները: Ռուսական գրականության մեջ այդ խնդրով զբաղվում է Ե. Ա. Սերգիենկոն: Խնդիրը լուրջ ուսումնասիրվել է նաև Ֆ. Վ. Բասսինի կողմից (1968, 1969, 1988), ով նշում էր, որ քոփինգի դրսևորման կարևոր նախապայմաններից մեկը վնասող գործոնի սուբյեկտիվ կարևորության իջեցումն է: Հեղինակի կարծիքով, հոգեբանական պաշտպանության հիմքը համարվում է դիրքորոշումների վերակառուցումը, որն ուղղված է վարքի չա-

փազանց հուզական լարվածության վերացմանը [2]: Ջարգացման հոգեբանության շրջանակներում վերահսկվող վարքը դիտարկվում է որպես «կարգավորում սթրեսի պայմաններում» (E. A. Skinner, M. J. Zimmer-Gembeck): Ռուսական հետազոտություններում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, կապված տվյալ հասկացության հոգեբանական իմաստի ոչ բավարար իմացության հետ [7]:

Քոփինգի ուսումնասիրման ոլորտները ռուսական և արևելյան դաշտերում տարբերվում են: Ռուս հեղինակներն առավել շեշտված են դեռահասների, աշխատակազմի և հատկապես՝ միջին օղակի ղեկավարների քոփինգ վարքի ուսումնասիրմանը: Նրանք առավել ուշադրություն են դարձնում քոփինգի դրսևորմանը սթրեսային իրավիճակներում և քոփինգն ընդունում են որպես սթրեսի հաղթահարման յուրօրինակ ձև:

Արևմտյան հոգեբանության մեջ պատկերն այլ է: Այնտեղ առկա են հետազոտություններ, որոնք հարում են կրոնին, հասարակությանը, ընտանիքին: Քոփինգը դիտարկվում է որպես կրոնական առանձնահատկություն, որպես անձին բնորոշ յուրահատկություն, դաստիարակության արդյունք, որի հիմքում ընկած է կյանքի որակը և մարդու հոգեկան, ֆիզիոլոգիական առողջությունը:

Արտասահմանյան գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս թվարկել մի շարք ուսումնասիրություններ, որտեղ քոփինգ վարքի հիմքում դիտարկվել է հումորը, առողջ ապրելակերպը, ռեֆրեյմինգը և այլն:

Հետազոտությունը ցույց է տվել, որ հումորով մարդիկ առավել արագ են կարողանում հաղթահարել բարդ իրավիճակը, քանի որ շատ դեպքերում իրավիճակին մոտենում են առավել անլուրջ՝ իջեցնելով նրա նշանակալիության աստիճանը: Հումորը որպես կանոն կապված է անձի խառնվածքի և նրա կյանքի երկարամյա փորձի հետ: Երկարատև ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հումորը կյանքի սթրեսորների համար համարվում է հետմղիչ մեխանիզմ (Safranek and Schill 1982; Nezu and Blisset 1988, Martin 2001; Kuiper et al. 2004) [5]:

Ամերիկյան հոգեբաններն ուսումնասիրություններ են կատարել, որտեղ քոփինգ վարքը դիտարկել են՝ ընտանի կենդանիների ունեցող մարդկանց, ֆինանսապես ապահով, կամավորությամբ զբաղվող, լավ բժշկական և հոգեկան առողջությամբ ապահովված մարդկանց մոտ: Այսինքն՝ կարելի է ասել, որ չկա մի ոլորտ, որտեղ քոփինգ վարքն ուսումնասիրված չլինի:

Առավել հետաքրքրական է քոփինգի ուսումնասիրությունը կրոնի տեսանկյունից, որտեղ կրոնը դիտարկվում է որպես քոփինգ վարքի ամենաուժեղ մեխանիզմներից մեկը: Կրոնի ուսումնասիրման հիմքում դիտարկվում են՝ համոզմունքները, իմացական բաղադրիչները և վարքը, որի միասնությունը թույլ է տալիս հաղթահարել կյանքի նույնիսկ ամենաբարդ իրադարձությունները: Հետազոտությունը կատարվել է արտակարգ իրավիճակներից փրկված 5800 դեռահասների հետ՝ Ավստրալիայից, Անգլիայից, Կանադայից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Ճապոնիայից, Լիբանանից, Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից, Թուրքիայից և այլն, որոնցից 48 %-ը նշել է, որ կրոնը նրանց կյանքում մեծ դեր է խաղում և հավատքն է օգնել նրանց փրկվել [5]:

Վերջերս առավել տարածված է դառել քոփինգ վարքի նոր մեթոդաբանական մոտեցում, որտեղ մարդը դիտարկվում է որպես հարաբերականորեն պասիվ սուբյեկտ, ով ենթարկվում է տարբեր իրավիճակային ազդակների և ակտիվ հակազդում է դրանց: Այստեղ առավել մեծ ուշադրություն է տրվում անձի հոգեբանական գծերին,

որոնք ապահովվում են վարքային դրսևորումներ, որի օգնությամբ անձը դիմադրում է երկարատև սթրեսային ազդակներին [6]:

Ներկայումս արտասահմանյան հոգեբաններն ընդունում են քոփինգ վարքի ֆենոմենի ուսումնասիրման երեք մոտեցում՝ դիսպոզիցիոնալ, իրավիճակային կամ դինամիկ և ներառական: Դիսպոզիցիոնալ մոտեցումը դիտարկում է՝ արդյո՞ք անձնունի համապատասխան անձնային որակներ, որով կկարողանա դիմադրել դժվարություններին: Այս մոտեցման հիմքում ընկած է Ջ. Ֆրեյդի հոգեվերլուծական մոդելը [4]: Սակայն, դիսպոզիցիոնալ մոտեցման քննադատների կարծիքով, անձնային փոփոխականները քոփինգ ակտիվության թույլ ցուցիչներ են համարվում, չնայած, որ անձը կարող է ունենալ քոփինգի առաջնային նախընտրություններ: Էքստրեմալ պայմաններում քոփինգի դրևորումը հիմնականում կարծրատիպային, վարքի կենսաբանորեն վարժեցված ձևեր են [1]: Իրավիճակային կամ դինամիկ մոտեցումը կենտրոնացված է հատուկ ռազմավարությունների վրա, որոնք փոփոխվում են կախված հատուկ իրավիճակից (X. Файфкель и С. Страк, 1989; К. Карвер, 1989; С. Фолкман, 1992): Ներառական մոտեցումը դիտարկում է անձնային և իրավիճակային գործոնները որպես քոփինգ ռազմավարության ընտրության որոշիչներ (P. Моос, Дж. Шеффер, 1993) [3]:

Մեր կարծիքով, աշխատակազմի քոփինգ վարքի ուսումնասիրման համար առավել նպատակահարմար է դիտարկել ներառական մոտեցումը, քանի որ աշխատակիցը դիտարկվում է աշխատանքային պայմաններում և նրա ռազմավարական ընտրությունը կախված է և՛ անձնային առանձնահատկություններից, և՛ տվյալ աշխատանքային իրավիճակից:

Այսպիսով, ուսումնասիրելով ռուսական և արևմտյան դպրոցների մեթոդաբանական մոտեցումները կարող ենք նշել, որ քոփինգի ուսումնասիրություններն և՛ առաջին, և՛ երկրորդ դաշտերում բավականին տարածված է, չնայած որ էապես տարբեր ոլորտների է հարում: Արևմտյան հոգեբաններն ուսումնասիրում են քոփինգը կյանքի որակի, հոգեկան առողջության և հասարակության տեսանկյունից, իսկ ռուսական դպրոցն առավել հակված է քոփինգը դիտարկել որպես սթրեսին դիմադրելու միջոց: Աշխատակազմի քոփինգ ռազմավարության ուսումնասիրությունը նպատակահարմար է կատարել երկու դպրոցների մեթոդաբանությամբ՝ առավել հստակ պատկեր ստանալու համար:

Օգտագործված գրականության ցանկ.

1. **Абабков В. А.** Адаптация к стрессу. Основы теории, диагностики, терапии, М. Перре. СПб.: Речь, 2004. с. 39-40.
2. **Исаева Е. Р.** Копинг-поведение и психологическая защита личности в условиях здоровья и болезни, СПб.: Издательство СПбГМУ, 2009, с. 36.
3. **Корзун С. А., Коломейцев Ю. А.** Философия и методология науки, Основные научные подходы к копинг-поведению (совладающему поведению) // Проблемы управления, 2010, № 2, с. 226-227.
4. **Endler N. S., Parker J. D. A.** Multidimensional Assessment of Coping: A Critical Evaluation / N. S. Endler, J. D. Parker // J. of Personality and Social Psychology, 1990, Vol. 58, № 5, p. 845.
5. **Harold G. Koenig, Dana E. King, Verna Benner Carson** Handbook of religion and Health, Oxford University press, New York 2012, p. 79-81.

6. <http://www.dissercat.com/content/psikhologiya-sovladayushchego-povedeniya-v-raznye-periody-zhizni> - *Крюкова Т. Л.* Психология совладающего поведения в разные периоды жизни
7. <http://www.dissercat.com/content/razvitie-koping-strategii-u-studentov-v-situatsiyakh-intellektualnykh-ispytanii> - *Илюхи А. Г.* Развитие копинг-стратегий у студентов в ситуациях интеллектуальных испытаний.

THE ANALYSIS OF METHODOLOGICAL APPROACHES OF COPING

Karapetyan N. I. (YSU, Yerevan, Armenia)

Key words: coping, staff, psychological support, stress, behavior.

The article deals with the notion “coping” interpreted by Russian and western psychological schools. It analyses theoretically the methodological approaches to coping, represents the research fields diachronically and synchronically.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

*Կարապետյան Վ. Ս., Խաչատրյան Ա. Ս., Սարգսյան Ա. Ս.
(ՀՊՄՀ, Երևան, Հայաստան)*

Հոդվածում ներկայացվում են ՀՀ Շախմատի ուսումնահետազոտական լաբորատորիայի կողմից իրականացված օբյեկտիվ վերլուծության և թեստավորման արդյունքները: Շախմատ ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետության բացահայտման նպատակով հետազոտական խնդրի է առաջադրվել վերլուծել ՀՀ հիմնական դպրոցների 2-4-րդ դասարաններում բարձր, միջին և ցածր առաջադիմությամբ սովորողների ուշադրության կենտրոնացվածության և խոչընդոտների հանդեպ կայունության ցուցանիշները: «Ուշադրության և խոչընդոտների հանդեպ կայունության գնահատման» մեթոդիկայի արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ ըստ խոչընդոտների հանդեպ կայունության գնահատման չափանիշների ցածր, միջին և բարձր առաջադիմությամբ 4-րդ դասարանում սովորողների մոտակնհայտ ավելանում է ճշգրիտ հակազդումների թվաքանակը: Հետևաբար, բարձրանում է սովորողների ուշադրության կայունությունը:

Հանգուցային բառեր. «Ուշադրության և խոչընդոտների հանդեպ կայունության գնահատման» մեթոդիկա, ուշադրության գնահատման չափանիշ, խոչընդոտների հանդեպ կայունության գնահատման չափանիշ, ուսումնական առաջադիմություն:

Կրտսեր դպրոցականների ուսումնական դժվարությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց շարքում էական տեղ է զբաղեցնում ուշադրության անկայունության խնդիրը, որը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է թողնում ինչպես ուսումնական գործունեության, այնպես էլ սովորողների ուսումնական ա-

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
<i>Դուրյան Մ. Կ.</i>	97
ԱՐԵԿՎԱՏ ՀՈՒՋԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆ	
<i>Եղիազարյան Ս. Է.</i>	101
ՀՈԳԵԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ Ա. Ի. ՄԻՐԱՔՅԱՆԻ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
<i>Եսայան Գ. Ս.</i>	104
ՖԻԼՍԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԳՈՎԱԶԴԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
<i>Եսայան Ժ. Ռ.</i>	107
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՋԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ	
<i>Զարարյան Է. Ս.</i>	111
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԵՐԿՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՊԱՏՃԱՌ	
<i>Զեյնալյան Ն. Ս.</i>	114
ԱՆՁԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԵՄԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	
<i>Ժամկոնցյան Ռ. Ս.</i>	118
ՀՈՒՋԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄՈՏ	
<i>Լոբյան Ա. Բ.</i>	122
ԾՆՈՂ-ԴԵՌԱՀԱՍ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՅԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՄՈՏ	
<i>Խաչատրյան Լ. Հ.</i>	125
ՔՈՓԻՆԳ ԵԶՐՈՒՅԹԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
<i>Կարապետյան Ն. Ի.</i>	128
ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ	
<i>Կարապետյան Վ. Ս., Խաչատրյան Ա. Ս., Սարգսյան Ա. Ս.</i>	132
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
<i>Կետյան Հ. Ս.</i>	135
ԿԱԴՐԵՐԻ ՀՈՍՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
<i>Կոչեցյան Լ. Ս.</i>	138